ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

«ԷԼՍԵ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ՝ ՍՈՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

«26» դեկտեմբեր 2025թ.

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
N «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/60» ծածկագիր
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Ավետիսյան՝ «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի և Արթիկի համայնքապետարանի միջև կնքվել է «09» սեպտեմբեր 2025թ-ի «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/60» ծածկագրով պայմանագիր որից հետո կնքվել է 29.10.2025թ-ին թիվ 1 համաձայնագիր, որի շրջանակում պետք է մատակարարվեր թվով 200 հատ մետաղյա աղբամաններ: ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ թվով 200 հատ մետաղյա աղբամանների ձեռք բերման և մատակարարման: «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են մետաղյա աղբամանները սակայն մատակարարված աղբամանները չեն համապատասխանում պայմանագրի հավելված թիվ 1-ի տեխնիկական բնութագրի պահանջներին: Պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեր կազմակերպությանը ծանուցվել է որ մատակարարված ապրանքի ուսումնասիրության ժամանակ ինչպես նաև հայտ ներկայացրաց և պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված հանրային հսկողություն իրականացնող կազմակերպությունների տնօրենների ներկայությամբ անզեն աչքով հայտնաբերել է անհամապատասխանություններ տեխնիկական պայմաններին՝ այսինքն մատակարարված աղբամանների թե պատյանը, թե կափարիչը, թե բռնակները զոդելուց հետո չեն անցել համապատասխան գալվանական պրոցես՝ չեն մշակվել տաք ցինկապատման մեթոդով, լոգարանում լիարժեք ընկղմամբ: Այլ պատրաստվել են ցինկապատ թիթեղից զոդման միջոցով, որից հետո զոդված հատվածները արծաթագույն ներկի միջոցով ներկվել են, ստեղծելով արտաքին պատրանք, թե այն ամբողջությամբ մշակվել է տաք ցինկապատման մեթոդով, լոգարանում լիարժեք ընկղմամբ, ինչպես նախատեսված է պայմանագրով: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց: Համաձայն Պայմանագրի նախատեսված է, որ Մատակարարը պարտավոր է մատակարարել պայմանագրի տեխնիկական պայմաններին համապատասխան Ապրանք՝

Տարայի պատյանը Նյութը՝ պողպատ, իրանի միացման տեսակը՝ եռակցված, ամբողջ մակերեսը, ներառյալ զոդված հատվածները մշակված տաք ցինկապատման մեթոդով, գալվանական լոգարանում լիարժեք ընկղմամբ,ԳՈՍ-9,307-2021 կամ ISO 1461, ցինկապատման շերտի հաստությունը ոչ պակաս 40մկմ: Աղբամանի տեղափոխման համար նախատեսված բռնակները՝ ոչ պակաս 4 հատ, պետք է լինեն մետաղական և զոդված լինեն աղբամանի իրանին: Տարայի կափարիչը Նյութ-պողպատ, միացման տեսակը՝ եռակցված, ամբողջ մակերեսը, ներառյալ զոդված հատվածները մշակված տաք ցինկապատման մեթոդով, ԳՈՍ-9,307-2021 կամ ISO 1461, գալվանական լոգարանում լիարժեք ընկղմամբ, ցինկապատման շերտի հաստությունը ոչ պակաս 40մկմ: Վերոգրյալի հիման վրա «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/60» ծածկագրով պայմանագրի կատարման գործընթացում պատասխանատու ստորաբաժանումը արդեն գրությամբ և բացասական եզրակացությամբ ծանուցել է «ԷԼՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որ մատակարարված մետաղյա աղբամանները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պայմաններին և չեն ընդունվելու: Ելնելով Վերոգրյալից և հիմք

ընդունելով Արթիկի համայնքապետարանի և «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/60» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի պահանջները, Ձեր կազմակերպությանը առաջարկել ենք մինչև 2025 թվականի դեկտեմբերի 22-ը մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխան ապրանք, որոնք որ կլինեն գործարանային արտադրության կհամապատասխանեն պայմանագրով նշված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք, որոնք որ կնդունվեն պայմանագրի կատարման պատասխանատու ստորաբաժանման անդամների կողմից և կտրվի դրական եզրակացություն գնման հյատը նախագծողի կողմից հակառակ դեպքում կկիրառվի պայմանագրով սահմանված տուգանքները և պատասխանատվության միջոցները:

Տեղեկացնում ենք մինչև առ օրս, «ԷԼՍԵ» սահմանափակ պատասխանատու ընկերության կողմից չեն փոխարինվել և մատակարարվել տեխնիկական պայմաններին համապատասխան մետաղյա աղբամաններ և չեն պահպանվում պայմանագրի 2.1.2 կետի պահանջները: Հայտնում ենք Ձեզ՝ որ ընկերության կողմից չեն պահպանվում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,

Եթե՝

(ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

(բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելու, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարել իր պարտականությունները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷԼՍԵ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը համարելով այն լուծված ընդհանուր 28 380 000 (քսանութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: Ընդ որում, գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարները:

Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման դեպքում (Պայմանագրի 6.2 կետի՝) Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա սակայն չմատակարարված ապրանքի գնի 28 380 000 ՀՀ դրամ գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Այսպիսով «ԷԼՍԵ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված «900205101109» գանձապետական հաշվին 11 աշխատանքային օրվա համար փոխանցել 156 000 (մեկ հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի 1.1 կետում նշված (Պայմանագրի 6.3 կետի՝) տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում սույն ծանուցումը ստանալուց հետո 10 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից բացված «900205101109» գանձապետական հաշվին 11 աշխատանքային օրվա համար փոխանցել 1 560 000 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որպես տուգանք Պայմանագրի 28 380 000 ՀՀ դրամ գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի **artikgnumner@mail.ru** էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև որակավորման ապահովում՝ 5 820 000 (հինգ միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովում՝ 3 880 000 (երեք միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված համապատասխանաբար «900008000698» և «900008000664» գանձապետական հաշիվներին փոխանցելու նպատակով, և (վճարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան), ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումների վճարման պահանջը հավաստող փաստաթղթերի հետ միասին մեր կողմից կներկայացվեն Ձեր կազմակերպության սպասարկող բանկ՝ «Ակաբա բանկ» ԲԲԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե վերը նշված վճարման ենթակա գումարները փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշիվներին, ապա «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի նկատմամբ չի կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում սույն որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. Ոսկանյան**

Կատարող՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի
աշխատակազմի գլխավոր մասնագետ գնումների
համակարգող Ղևոնդ Գրիգորյան
Հեռախոս (0244) 5-20-21,